ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » **_____2024թ** **N--------- -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 849-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի «Մշակութային գործունեության իրականացման նպատակով Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները և սահմանափակումները սահմանելու մասին» N 849-Ն որոշման հավելվածի 11-րդ կետից հետո լրացնել նոր 11.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.1. Արգելվում է մշակութային գործունեություն իրականացնել Երևան քաղաքի ստորև նշված հանրային բացօթյա վայրերում.

1) Հանրապետության հրապարակ և դրան հարակից 100 մետր շառավղով տարածք,

2) Մաշտոցի պողոտա-Սայաթ-Նովա պողոտա-Տերյան-Թումանյան փողոցներով պարփակված տարածք,

3) Հյուսիսային պողոտա և դրան հարակից 100 մետր շառավղով տարածք:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 849-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության ու համայնքներում զբոսաշրջության զարգացման խթանումը համայնքի պարտադիր խնդիրներից են: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն Երևան քաղաքի ավագանին սահմանում է մշակութային գործունեության իրականացման նպատակով Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները և սահմանափակումները, որի համաձայն Երևան քաղաքի ավագանու կողմից 2023 թվականի սեպտեմբերի 12-ին հաստատվել է մշակութային գործունեության իրականացման նպատակով Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները և սահմանափակումները սահմանելու մասին N 849-ն որոշումը: Հասարակական կարգի պահպանության բնագավառում Երևանի քաղաքապետը իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ հետևում է համակեցության կանոնների պահպանմանը, հետևում է ավագանու հաստատած կանոնների պահանջների պահպանմանը, վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված դեպքերում վարչական պատասխանատվության է ենթարկում զանցառուներին, միջոցառումներ է իրականացնում այդ զանցանքների կանխարգելման, նվազեցման, կանխման և բացահայտման համար:

Միաժամանակ ֆիզիկական անձանց կողմից Հանրապետության հրապարակում, Հյուսիսային պողոտայում և Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի հարակից տարածքներում մշակութային գործունեություն իրականացմամբ բազմաթիվ խնդիրներ են առաջանում նշված հատվածների հարակից տարածքներում առևտրային գործունեություն իրականացնող սուբյեկտների համար՝ բացասական ազդեցություն թողնելով զբոսաշրջության համար, ինչպես նաև նշված գործունեությամբ խախտվում են հարակից բնակելի շենքերի բնակիչների անդորրը՝ բացասական հետևանքներ թողնելով վերջիններիս առողջությանը: Բազմաթիվ են նաև առևտրային գործունեություն իրականացնող սուբյեկտների և բնակիչների կողմից Երևան համայնք մուտքագրված դիմում-բողոքները, որոնց համաձայն վերջիններս պահանջում են կարգավորել ֆիզիկական անձանց կողմից իրականացվող գործունեությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջացել է անհրաժեշտություն մշակել որոշման նախագիծ Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի N 849-Ն որոշմամբ հաստատված հավելվածում փոփոխություն կատարելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ԱՎԻՆՅԱՆ